

## Ճանապարհ, ժամանակ, արագություն

Միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը նրա շարժման արագությունն է:

Արագությունը կարելի է չափել արագաչափի միջոցով:



## Օրինակ`

Կարող ենք ասել.

Ավտոմեքենան շարժվում է ժամում 70 կմ արագությամբ, կամ ավտոմեքենան շարժվում է 70կմ/ժ արագությամբ:

**Մարմնի շարժման արագությունը** հավասար է նրա անցած ճանապարհի և ծախսած ժամանակի քանորդին:

## Այսինքն`

**Արագություն= Ճանապարհ : ժամանակ**

**Մարմնի անցած ճանապարհը** հավասար է նրա շարժման արագության և ճախսած ժամանակի արտադրյալին:

$$\text{Ճանապարհ} = \text{Արագություն} \cdot \text{Ժամանակ}$$

**Մարմնի ճախսած ժամանակը** հավասար է նրա անցած ճանապարհի և արագության քանորդին:

$$\text{Ժամանակ} = \text{Ճանապարհ} : \text{Արագություն}$$

### **Խնդիրներ.**

- Գնացքը 15 ժամում միևնույն արագությամբ անցավ 1200 կմ ճանապարհ: Որքա՞ն էր գնացքի շարժման արագությունը:

$$1200:15= 80$$

- Որքա՞ն ճանապարհ կանցնի ավտոմեքենան 7 ժամում, եթե շարժվի 65 կմ/ժ արագությամբ:

$$7 \times 65 = 455 \text{ կմ/ժ}$$

- Հեծանվորդը 4 ժամում ընթացավ 20 կմ/ժ  
արագությամբ: Որքա՞ն ճանապարհ նա անցավ:

$$20 \times 4 = 80 \text{ կմ/ժ}$$

- Գնացքը 2 օրում միևնույն արագությամբ անցավ 1600 կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 13 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 6 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը:

$$1040 \text{ կմ/ժ}$$

- Հայկենց տնից մինչև դպրոց 320 մ է: Նա դպրոց է գնացել 40 մ/ր արագությամբ: Որքա՞ն ժամանակ նա ծախսեց դպրոց գնալու համար:

$$8 \text{ մ/ր}$$

- Երևանից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 3 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 70 կմ, իսկ երկրորդը՝ 60 կմ:

$$30 \text{ կմ}$$

- Մոտոցիկլավարը 200կմ ճանապարհի առաջին 80կմ-ն անցավ 40կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Մոտոցիկլավարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:

4 ժամ